

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1. Ջրաղվածություն

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը 2001թ. հունվար-փետրվարին հանրապետությունում, ըստ գնահատման, կազմել է 1431.5 հազ. մարդ, որոնց 89.3% կամ 1278.5 հազ. մարդ զբաղված է տնտեսության մեջ, իսկ 10.7% կամ 153.0 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) չի ունեցել աշխատանք, գրանցվել է ՀՀ աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

Տնտեսության մեջ զբաղված բնակչության 34.8% կամ 445.4 հազարի վերաբերյալ տեղեկությունը ստացվում է մոտ 9 հազար սուբյեկտներից, ամսական պարբերականությամբ ստացվող վիճակագրական հաշվետվությունների հիման վրա: 2001թ. փետրվարին նշված սուբյեկտներում զբաղված բնակչության թվաքանակը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 8.3%: Այս սուբյեկտներում զբաղված բնակչության 45.7% զբաղված է եղել սոցիալական ոլորտում (առողջապահություն և սոցիալական ապահովություն, կրթություն, մշակույթ, արվեստ), 26.3%՝ արդյունաբերության մեջ, 6.7%՝ տրանսպորտի և կապի համակարգում, 4.4%՝ շինարարության մեջ, 3.1%՝ բնակարանային կոմունալ և բնակչության կենցաղսպասարկման ոլորտում, 6.0%՝ կառավարման համակարգում և 7.8%՝ այլ ճյուղերում:

2001թ. փետրվարի վերջին ՀՀ աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայությունում հաշվառման կանգնած են եղել 177.5 հազար աշխատանք փնտրող քաղաքացիներ, որոնց 99.2% կամ 176.1 հազարը չզբաղված քաղաքացիներն են: Գործազուրկի կարգավիճակ է ստացել չզբաղված քաղաքացիների 86.8% կամ 152.8 հազ. մարդ:

2001թ. փետրվարին վերը նշված ծառայության կողմից հաշվառման են վերցվել 4.0 հազ. մարդ, որոնցից 3.4 հազարը կամ 85.0%-ը ստացել է գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից հանվել է 3.6 հազ. մարդ, որոնցից 38.9%-ը՝ աշխատանքի տեղավորման պատճառով:

Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի, 2001թ. փետրվարին*

| | Աշխատանք փնտրող քաղաքացիների թիվը | | Նրանցից գործազուրկներ | |
|-------------------|-----------------------------------|--|-----------------------|--|
| | ընդամենը, հազ. մարդ | տոկոսներով՝ նախորդ տարվա փետրվարի նկատմամբ | ընդամենը հազ. մարդ | տոկոսներով՝ նախորդ տարվա փետրվարի նկատմամբ |
| Ընդամենը | 177.5 | 85.6 | 152.8 | 85.3 |
| <i>այդ թվում՝</i> | | | | |
| Արագածոտն | 2.2 | 71.0 | 1.6 | 72.7 |
| Արարատ | 8.4 | 84.0 | 6.7 | 87.0 |
| Արմավիր | 12.0 | 76.4 | 9.3 | 73.8 |
| Գեղարքունիք | 10.7 | 84.3 | 7.6 | 82.6 |
| Լոռի | 24.6 | 84.2 | 21.3 | 80.7 |
| Կոտայք | 14.8 | 77.5 | 11.5 | 76.2 |
| Շիրակ | 33.3 | 93.3 | 29.5 | 91.6 |
| Սյունիք | 15.8 | 100.0 | 13.6 | 97.1 |
| Վայոց Ձոր | 2.2 | 88.0 | 1.9 | 90.5 |
| Տավուշ | 5.2 | 81.3 | 4.7 | 83.9 |
| Երևան | 48.3 | 84.6 | 45.1 | 86.6 |

**) ՀՀ աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայության տվյալներով*

Գործազուրկ բնակչության 95.0% կենտրոնացված է քաղաքային բնակավայրերում, նրանցից՝ 29.5 %՝ Երևան, 17.6 %՝ Գյումրի և 8.3 %՝ Վանաձոր քաղաքներում:

Կանայք կազմել են պաշտոնապես գրանցված գործազուրկների 64.8%: Նրանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում նախորդ տարվա փետրվարի նկատմամբ աճել է 1.0 տոկոսային կետով:

Աշխատուժի պաշտոնապես հայտարարված պահանջարկը 2001թ. փետրվարին կազմել է 511 մարդ. այդ թվում՝ 65.8 % կամ 336-ը՝ բանվորական մասնագիտությունների գծով:

2001թ. փետրվարին աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայությունների միջնորդությամբ աշխատանքի է տեղավորվել 1423 մարդ: Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը մեկ տեղի հաշվով կազմել է 347 մարդ (աշխատանք փնտրող):

Նպաստառու գործազուրկների թվաքանակը 2001թ. փետրվարին կազմել է 9.6 հազ. մարդ, իսկ գործազրկության նպաստի միջին չափը՝ 3204 դրամ:

Պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը, հաշվարկած որպես զբաղվածության ծառայություններում գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, 2001թ. փետրվարին կազմել է 10.7% և նախորդ ամսվա համեմատությամբ մնացել է նույն մակարդակի վրա, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 1.3 տոկոսային կետով: